ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/176

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.06.2021թ. թիվ 26/26-1/10530-2021 գրությամբ «Տիկասոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 22.06.2021թ. թիվ 39/02-28-429 գրության հիման վրա, 28.06.2021թ. թիվ 26/26-1/10530-2021 գրությամբ նախաձեռնել է «Տիկասոն» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Տիկասոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Տիկասոն» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2021/176 ընթացակարգի վերաբերյալ հայտնում եմ, որ հայտի շտկման ծանուցումը ստանալու հաջորդ աշխատանքային օրը ներկայացրած հայտը շտկելու նպատակով կազմել եմ հրավերով պահանջվող Հավելված 1.1 և «Տիկասոն» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեից ըստ իս ուղարկել եմ պատվիրատուին: Սակայն ուղարկելու ժամանակ կատարել եմ մեխանիկական սխալ, մասնավորապես՝ էլեկտրոնային փոստում «ответить» հղումը սեղմելով շտկված հայտը պատվիրատուին ուղարկելու փոխարեն սխալմամբ ուղարկել եմ ino@armeps.am համակարգին: Չնկատելով այդ վրիպումը համոզված եմ եղել, որ շտկված հայտը պատվիրատուին ուղարկել եմ ժամանակին: Այս հանգամանքների բերումով է, որ հայտի շտկումը պատվիրատուն չի ստացել: Ցանկանում եմ Ձեզ հավաստիացնել, որ չեմ ցանկացել խախտել գնման գործընթացում ստանձնած որևէ պարտավորություն, իսկ այս ընթացակարգը նախաձեռնվել է զուտ մեխանիկական վրիպում թույլ տալու պատճառով: Նշվածից ելնելով՝ խնդրում եմ հնարավորության դեպքում մերժել սույն ընթացակարգը և «Տիկասոն» ՍՊԸ-ին չընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Տիկասոն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/176 ընթացակարգի շրջանակներում 13.07.2021թ. ժամը 09:15-ին և 22.07.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնացությունը:

3. <u>«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.06.2021թ. թիվ 39/02-28-429 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2021թ.-ի հունիսի 7-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 12:30-ին տեղի է ունեցել ապրանքների ձեռքբերման «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/82»

ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը:

«Տիկասոն» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության փաստաթուղթը՝ Հավելված 1.1-ում սույն գնման ընթացակարգի ծածկագիրը սխալ էր նշված:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և 15.06.2021թ.-ին համակարգի միջոցով ծանուցել «Տիկասոն» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Տիկասոն» ՍՊԸ-ի կողմից սույն գնման ընթացակարգի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին շտկված փաստաթուղթ սահմանված ժամկետում չի ներկայացվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Տիկասոն» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «Տիկասոն» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում և հրապարակված են տեղեկագրում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԵԳ-2021/176 ընթացակարգի շրջանակներում 13.07.2021թ. ժամը 09:15-ին և 22.07.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/176 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/176 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/82» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Տիկասոն» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ գնահատելով հայտում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին արձանագրել է, որ «Տիկասոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում սույն գնման ընթացակարգի ծածկագիրը սխալ է նշված:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանը առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 15.06.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ արձանագրել է, որ «Տիկասոն» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել Հավելված 1.1-ի շտկված տարբերակը և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.06.2021թ. թիվ 26/26-1/10530-2021

գրությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 22.06.2021թ. թիվ 39/02-28-429 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Տիկասոն» ՍՊԸ-ի գրությունը, ինչպես նաև գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից*** պայմանագրի միակողմանի լուծմանը ***կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ ***<u>հրավերով նախատեսվում է նաև, որ</u>***

մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ ***մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը*** կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:***

Այսպես, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է ***«ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/82» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ***, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Տիկասոն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ գնահատելով հայտում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին արձանագրել է, որ «Տիկասոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում սույն գնման ընթացակարգի ծածկագիրը սխալ է նշված:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանը առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 15.06.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ արձանագրել է, որ «Տիկասոն» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել Հավելված 1.1-ի շտկված տարբերակը և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ*** մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ***, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ ***հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Նույն կետի 8.10-րդ ենթակետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:***

Նույն կետի 8.16-րդ ենթակետի համաձայն՝ սույն հրավերի 1-ին մասի ***8.9 և 8.10 կետերում նշված փաստաթղթերը մասնակիցը սահմանված ժամկետում հանձնաժողովի քարտուղարին ներկայացնում է վերջինիս՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով:*** Քարտուղարը պարտավոր է փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ սույն

հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից Հավելված 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, որպես գնման ընթացակարգի ծածկագիր նշվել է՝ ***«ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/33»***, մինչդեռ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է ***«ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/82»*** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում չի շտկել հայտում առկա անհամապատասխանությունը, որը հանգեցրել է Ընթացակարգին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ ***մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը*** կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Այսպիսով՝ գործով առկա նյութերը համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, գտնում եմ, որ «Տիկասոն» ՍՊԸ-ն «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/82» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչված այն հանգամանքին, որ շտկված փաստաթուղթը ուղարկել է ino@armeps.am համակարգին, արձանագրում եմ, որ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.16-րդ ենթակետով սահմանված է, որ սույն հրավերի 1-ին մասի ***8.9 և 8.10 կետերում նշված փաստաթղթերը մասնակիցը սահմանված ժամկետում հանձնաժողովի քարտուղարին ներկայացնում է վերջինիս՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով: Սույնով արձանագրում եմ, որ համաձայն Ընթացակարգի հրավերի՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ info@epromotion.am:***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.06.2021թ. թիվ 26/26-1/10530-2021 գրությամբ «Տիկասոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Տիկասոն» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**